

հոդածութեան՝ զործը դժբախտարար աղաս չէ մնացած մի քանի տպագրական սխալներից, որոնցից գլխաւորներն են էջ՝ 11 ։ ձական փիս. ձական թ-ի, էջ՝ 155 ցածրից 2 րդ տող՝ ստեաց փոխ. առեաց. ի. էջ՝ 198 մրջումն փոխ. մրջիմն:

Թերեւ ներուի ինձ մի դիտողութիւն սոսկ մեթոդի տեսակէտից. Բնդունելով հանդերձ, որ ներկայ աշխատութեան մէջ բացադրուած բոլոր ձեւերը միանգամայն համապատասխան են դասական հայերէնի ողուն. այնուամենայնիւ աւելորդ չոլիտի լինէր. Եթէ հեղինակը հարեանցիօրէն յիշատակած լինէր. յատկապէս զլիսաւոր երեսյթների, նաև յետ դասականները. Այս յիշատակութիւնն անհրաժեշտ է այն տեսակէտից, որ տպադիր հրատարակութիւններից. որոնց միջոցով միայն ուսանողը պիտի ծանօթանայ դասական գրուածներին, ոչ սին զերծ չէ յետդասական ձեւերի տիրապետութիւնից. Կրաւորական անկատար եղ. Գ. Պէմբի նկատմամբ հեղինակներէն արդէն արել է մի փորձ, որ անշուշտ իր օգտակարութիւնը պլոտի ունենայ:

Գինն է՝ տեսարակի ձևով՝ 5 մ. 40 ֆեն. (մօտ 2 ր. 50 կ.), լաթակազմ՝ 6 մ. 40 ֆեն. (մօտ 3 ր.).

Աւելի մանրամասն. ինչպէս ասացինք, կը խօսենք ուրիշ տեղ, հաւանօրէն ի մօտոյ հրատարակելի հայագիտական ժողովածուի մէջ:

Մերույ վարդապետ

ԴԱՍԱԳԻՐՔ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ

Ա. Եւ Բ. տարի ժողովածու հայ-ժողովրդական, աղպային եւ եւրոպական միածայն եւ երկան երգերի կազմեց Սոլ. Մելիքեան, Թիֆլիս, զինը իւրաքանչյուրին 25 կուտ.

Երգ-երաժշտութիւնը մեր դպրոցներում որոյէս պարտադիր առարկայ իւր որոշ տեղը ունի, բայց իւր նպատակին չի ծառայում շնորհիւ այն անտարբերութեան, որ նկատւում է մեր դպրոցների զեկագարների կողմից. որտեղ այս առարկան համարելով որպէս երկրորդական առարկայ, դասատւութիւնը յանձնուում է ամեն մի պատահական և ոչ մասնագէտ ուսուցչի. Այս մի կողմից, կանոնաբար դասադրքերի բացակայութիւնը միւս կողմից պատճառ է դասնում այս առարկայի յետաղիմման:

Միթէ ապացուցանելու կարիք կայ, որ կանոնաւոր երգ-երաժշտութիւնը ահազին նշանակութիւն ունի դաստիարակութեան տեսակէտից, որ նա զարդացնում է աշակերտի զեղարուեստական

ձաշակը, ազնւացնում, փափկացնում է նրա թիրտ զգացմունքները, պաղապար է տալիս զեղեցկի մասին, զարգացնում է նրա երաժշտական լսողութիւնը և վերջապէս խմբական երդի միջոցով սովորեցնում է նրան կարգապահութիւն։

Այս հանգամանքները ի նկատի ունենալով պիտի լուրջ ուշադրութիւն դարձնել երդ-երաժշտութեան զասաւանդման վրայ և աշխատել որքան հնարաւոր է լաւ հիմքերի վրայ դնել այդ առարկայի դասաւանդութիւնը։

Ի՞նչ երգեր անցնել դպրոցում, մասնաւորապէս ցածր դասարաններում։ Այս հարցը լուծելու համար նախ պիտի պարզուի, թէ ի՞նչն է հետաքրքրում մանկան, որն է մատչելի երեխայի հոգուն, չառ պարզ է այն, ինչ որ շրջապատի ծնունդ է, ինչից որ մատուրապէս սնւում է և զարգանում, ինչ որ իրան դուր է դալիս, որից և մեծ բաւականութիւն է ստանում։

Ի՞նչպէս որ երեխային տալիս են կարդալու այն բանը, որը լաւ է հասկանում, աշխարհազրութիւն անցնելու համար սկսում են նախ հայրենագիտութիւնից՝ իր բնակավայրից հետզհնտէ լայնացնելով այդ շրջանը զնում շատ հետուն, կամ մանկան հոգեկան աշխարհի մօտիկ և հասկանալի հերիաթներից և առանպելներից սկսելով հասնում են իսկական պատմութեան՝ օրատմական փաստերին, այնպէս էլ երդ-երաժշտութեան զասաւանդումը պիտի սկսել ամենապարզ և հասկանալի երգերից, տանելով կամաց-կամաց աւելի բարդ երաժշտութեան։

Մեր հայ մանկան համար ամենահասկանալին հայ ժողովրդական երգն է, որ լսում է մանուկը շարունակ իր ծնողների, եղբօրու քրոջ, ընկերոջ ու հարեանի բերաններից ժողովրդական երգն է այն առաջին և հիմնական ինստանցը, որից յետոյ կարելի է աստիճանաբար համեմ տաղանդաւոր երաժիշտների ամենաբարդ ստեղծագործութիւններին։

Ահա այս տեսակէտը ի նկատի ունենայով մօտենանք պ. Ապ. Մելիքեանի կազմած երգեցողութեան զասաղրքերին Պ. Ապ. Մելիքեանը բուն հայ ժողովրդի զաւակ է, սնուած հայ ժողովրդի ուշից և իր սկզբնական երաժշտական կրթութիւնը ստացած հայ ժողովրդական երգը վերաստեղծող մեր անուանի երաժշտապէտ կոմիտաս վարդապետից։ Որպէս դասաւու անձամբ զգացել է ժողովրդական երդի անհրաժեշտութիւնը և իր զասաղրքերը սկսել է ժողովրդական երդով և ինչպէս իր առաջնորդողում էլ ասում է, որ «ժողովրդական երգերը իրենց աշխայժ բնաւորութեամբ, մշտական թարմութեամբ և ստեղծագործական պարզութեամբ նոյնչափ հարազատ և սիրելի են մանուկների համար, որքան այդ նոյն ժողովրդի ստեղծագործած հերիաթը մայրենի լեզուի զասաւութեան համար»։

Նորութիւն չեն այս երդերը, առեն տեղ կզանէք, ոի քանի
անգամ տսլագրուած, միայն ոլ. Մելիքեանը հաւաքել է զանազան
տեղերից, սիստեմի վերածել, աստիճանական զարդացումով պար-
զից դէպի բարդը դասաւորել. Առաջին զիրքը զրուած է միայն դօ-
մաժօրով և տեղ-տեղ լեռ մինօրուվ, և այնքան պարզ երդեր են, որ
չէք պատահիլ ոչ մի սօլ դիէզ: Բոլորն էլ աշխոյժ բնաւորու-
թեամբ և թարմացուցիչ: Երկրորդ զիրքը արդէն բարդանում է և
աւելի բարձր դասարանների համար է և բոլոր երդերն էլ բարդ
գամաններով է զրուած, որոնք ունին մէկ կամ աւելի դիէզներ և
բեմօլներ, և մեծագոյն մասը զրուած է երկձայն, որոնք չառ ան-
հրաժեշտ են ոչ միայն որպէս դասաւանդելիք նիւթ դասարաննե-
րում, այլ և խմբական երդեր հանդէսների և երեկոյթների համար:

Բացի հայ-ժողովրդական երդերից պատահում ենք նաև հա-
մաշխարհային յայտնի երաժիշտների զործերից ինչպէս օր. Մոցար-
տի, Շումանի և այլ հեղինակների, որոնք փոխազրուած են հայերէն
և աչքի են ընկնում որպէս աշխոյժ և կենդանի զործեր, որոնք ու-
նեն ժողովրդական բնոյթ:

Այս երդարանները երկու ծառայութիւն կարող են մատուցա-
նել. նախ որպէս ձեռնարկ դասաւուների համար ցածր դասարան-
ներում և որպէս դասադիրք աշակերտների համար բարձր դասա-
րաններում, որտեղ անցնում են երաժշտութեան տարրական տե-
սութիւնը գծային սիստեմով:

Այս բոլորից յետոյ չենք կարող մի փոքրիկ դիտողութիւն
չանել. իւրաքանչիւր մի մօտիւ ունի իւր յատուկ տեկստը, որը
արդէն ժողովրդականացած է. չի կարելի ուրիշ տեկստ յարմարեց-
նել այդ մօտիւին, դա արդէն կդառնայ թիսովի, ինչպէս որ է Ա.
Կրքի № 1-ը, որը «Իմ չինարի» տեկստի փոխարէն զրած է Աղա-
յեանի «Արե արելը. № 3 ը «Սօնացի փոխարէն զրուած է Վար-
դել քաղել»: № 11-ը «Երբ որ մայրը»ի փոխարէն զրուած է «Երբ
որ լեզուս» և այլն: Վերոյիշեալ համարների եղանակները արդէն
ունեն իրենց յատուկ տեկստը և միայն այդ տեկստով պիտի եր-
դել: Նաև Հօդալլօյ-ի մօտիւը այդ չէ:

Այս փոքրիկ թերութիւնները այնուամենայնիւ չի նսեմացնում
զրքի արժանիքները և մեր երաժշտական աղքատ զրականութեան
մէջ ոլ. Մելիքեանի զրքերը անշուշտ իւրեանց որոշ տեղը կզրաւեն,
որը և յանձնարարում ենք մեր երդ-երաժշտութեան դասաւուներին:

Թուրք արելայ